ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ФАКУЛЬТЕТ АРМЯНСКОЙ ФИЛОЛОГИИ

YEREVAN STATE UNIVERSITY

FACULTY OF ARMENIAN PHILOLOGY

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Армения, Ереван, 0025, Абовяна 52ª • 52ª Abovyan, 0025, Yerevan, Republic of Armenia

(+374 10) 54-43-91/94,95,96/1-37, armphilology@ysu.am, www.ysu.am

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Թ Իվ 7

ԵՊՀ ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝ 2024 Թ. ՀՈՒՆԻՍԻ 5 - ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

Օրակարգում՝

1. 2023-2024 ուստարվա առկա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի ավարտական աշխատանքների պաշտպանության ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահի հաշվետվությունը:
2. Կրթական ծրագրերի ղեկավարների 2023-24 ուստարվա հաշվետվությունը կատարած աշխատանքների վերաբերյալ: 2024-25 ուստարվա կրթական ծրագրերի ղեկավարների հաստատում:
3. Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի տարեկան հաշվետվությունը:
4. Առկա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորում:
5. Ընթացիկ հարցեր:

Սկսելով գիտական խորհրդի նիստը՝ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան դոց. Ա. Գալստյանը տեղեկացրեց, որ գիտխորհրդի 32 անդամներից նիստին մասնակցում է 23-ը, և ապահովված է անհրաժեշտ քվորումը: Նա այնուհետև ընթերցեց նիստի օրակարգը, որը հաստատվեց միաձայն բաց քվեարկությամբ:

Օրակարգի 1-ի հարցի առթիվ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան, դոց. Ա. Գալստյանը ձայնը տվեց հայ բանասիրության ֆակուլտետի բակալավրիատի և մագիստրատուրայի առկա ուսուցման ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ բ. գ. թ. Սաթենիկ Ավետիսյանին, որն ընթերցեց իր հաշվետվությունը, որում մասնավորապես նշված էր.

2023-24 ուստարում «Հայոց լեզու» առարկայից ավարտական աշխատանք պաշտպանել է բակալավրի 49 ուսանող: 49 ուսանողից տասնվեց ուսանող ստացել է 20 միավոր, ինը ուսանող՝ 19 միավոր, ինը ուսանող՝ 18 միավոր, երեք ուսանող՝ 17 միավոր, վեց ուսանող՝ 16 միավոր, մեկ ուսանող՝ 15 միավոր, մեկ ուսանող՝ 12 միավոր, մեկ ուսանող՝ 11 միավոր, երեք ուսանող՝ 10 միավոր:

«Հայ գրականություն» առարկայից ավարտական աշխատանք է պաշտպանել 24 ուսանող։ Ութ ուսանող ստացել է 20 միավոր, չորս ուսանող՝ 19 միավոր, յոթ ուսանող՝ 18 միավոր, երկու ուսանող՝ 17 միավոր, երկու ուսանող՝ 15 միավոր, մեկ ուսանող՝ 12 միավոր։

Մագիստրոսական թեզեր պաշտպանվել են երկու ծրագրով՝ «Ժամանակակից հայոց լեզու և թարգմանչական գործ» և «Հայ գրականություն»։

«Ժամանակակից հայոց լեզու և թարգմանչական գործ» ծրագրով պաշտպանությանը մասնակցել է ութ ուսանող, որոնցից վեց ուսանող ստացել է 20 միավոր, երկու ուսանող՝ 19 միավոր։

«Հայ գրականություն» ծրագրով պաշտպանությանը մասնակցել է ութ ուսանող, որոնցից չորս ուսանող ստացել է 20 միավոր, մեկ ուսանող՝ 19, երկու ուսանող՝ 18 միավոր, մեկ ուսանող՝ 16 միավոր։ Մեկ ուսանող չի ներկայացել պաշտպանությանը։

Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունն անցել է գործող ընթացակարգին համապատասխան, բողոքարկումներ չեն եղել։

Թե՛ պաշտպանության ներկայացված ավարտական աշխատանքները, թե՛ մագիստրոսական թեզերը ընդհանուր առմամբ համապատասխանում էին ներկայացվող պահանջներին և գիտական չափանիշներին։

Ավարտական աշխատանքներում, ըստ կանոնակարգային պահանջի, ներկայացված էին ուսումնասիրության նպատակը, խնդիրները, ակնկալվող արդյունքները, հիմնավորված էր արդիականությունը, ներկայացված էր համապատասխան գրականությունը, պահպանված էին նաև կառուցվածքային, տեխնիկական պահանջները։

Պաշտպանության ընթացքում ուսանողները ցուցադրում էին նաև աշխատանքի լուսապատկերային տարբերակը։

Պաշտպանությանը մասնակցած ուսանողները հիմնականում կարողանում էին ներկայացնել իրենց կատարած աշխատանքը, պատասխանել հանձնաժողովի հարցերին։ Կային նաև մի քանի թույլ պատասխաններ, որոնք ցածր գնահատականներ ստացան։

Ընդհանուր առմամբ ուսանողների մասնագիտական գիտելիքները համապատասխանում էին պահանջվող մակարդակին, և վատ պատասխանները փոքրաթիվ էին։ Բակալավրիատի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաները հիմնականում հաջող էին ընտրված։ Թե՛ գրականության, թե լեզվի՛ գծով աշխատանքների թեմաները մեծ մասամբ արդիական էին, կային արդեն հայտնի թեմաների նորովի մեկնաբանություններ։ Որոշ թեմաներ կարելի էր քննել նյութին առնչվող առավել ընդգրկուն համատեքստում, ինչը ուսանողին հնարավորություն կտար առաջադրված խնդիրը կամ խնդիրները հետազոտել համակարգի մեջ և ոչ կտրված գրական կամ մշակութաբանական լայն շրջանակից։

Ներկայացված աշխատանքների ընդհանուր որակը, ուսանողների պատրաստվածությունը վկայում էին, որ թեզերի ղեկավարները և համապատասխան ամբիոնները իրենց աշխատանքը կատարել են անհրաժեշտ մակարդակով։ Աշխատանքներում հիմնականում պահպանված էին նաև տեխնիկական պահանջները։

Գրախոսները ևս իրենց կարծիքները ներկայացրին պահանջված չափանիշներին համապատասխան։ Գրախոսություններում հստակ նշված էին ավարտական

աշխատանքներում և մագիստրոսական թեզերում առկա վրիպակներն ու թերությունները, արվեցին տեղին դիտարկումներ, որոնք, կարծում ենք, օգտակար կլինեն հետագայում գիտական այլ աշխատանքներ կատարելիս։ Հատկապես բակալավրիատի ավարտական որոշ աշխատանքներում կար թեմայի համակարգային ընկալման խնդիր, առանձին դիտարկումներն այդպես էլ ընդհանրական եզրակացությունների չէին հանգում։ Աշխատանքների մի մասը չուներ կայուն մեթոդաբանական հիմք, հաճախ մեթոդի մասին գիտելիքները սխալ էին կամ ոչ ամբողջական։ Ցանկալի է, որ ուսանողները ծանոթ լինեն ուսումնասիրվող թեմայով ստեղծված ամբողջ գրականությանը և քննական վերաբերմունք ունենան առաջադրված խնդիրներին, հայտնեն իրենց դիրքորոշումը, ինչը կբարձրացնի հետազոտության ինքնուրույնության մակարդակը։ Պարզ է, որ այդ հարցում մեծ է գիտական ղեկավարների ու մասնագիտական ամբիոնների դերը։

Պաշտպանության ընթացքում պահպանված էին ընթացակարգային պահանջները, որը վկայում է ֆակուլտետի դեկանի և դեկանատի աշխատակիցների լավ աշխատանքի մասին։

Օրակարգի 2-րդ հարցի առթիվ առթիվ ֆակուլտետի կրթական ծրագրերի ղեկավարները գիտխորհրդին ներկայացրին իրենց հաշվետվությունները։ Բակալավրիատի կրթական ծրագրի ղեկավար, հայ բանասիրության ֆակուլտետի գրասենյակի ղեկավար, բ. գ. թ., դոց. Ա. Սարգսյանը մասնավորապես նշեց, որ բակալավրիատի առաջին կուրս ընդունված ուսանողներին ծանոթացրել է իրենց իրավունքներին ու պարտականություններին, ներկայացրել է գնահատման գործող համակարգը, գրադարանից օգտվելու կարգը, ԵՊՀ ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կարգը, ԵՊՀ ներքին կարգապահական կանոնները։

Բակալավրիատի առկա և հեռակա ուսուցման առաջին կուրսի ուսանողներին ուղղորդել է ընտրելու կամընտրական դասընթացներ՝ համակարգելով գործընթացը։

Բակալավրիատի առկա ուսուցման երկրորդ և հեռակա ուսուցման երրորդ կուրսերին մեկնաբանել է մասնագիտացման դասընթացների ընտրության կարգը։

Համակարգել և իրականացրել է ԵՊՀ ուսումնական գործընթացի կազմակերպման կարգով հաստատված աշխատանքները։

Կազմել և էլեկտրոնային համակարգ է ներմուծել դասընթացների ուղեցույցը։

«Հայոց լեզվի պատմություն և լեզվաբանություն» մագիստրոսական ծրագրի ղեկավար, բ. գ. դ., պրոֆ. **Ա. Աբաջյանը** իր խոսքում նշեց, որ մագիստրոսական ծրագիրը իրականացվում է 1,5 տարում, ծրագրում ներառված դասընթացները դասավանդվում են պատշաճ մակարդակով՝ ապահովելով անհրաժեշտ վերջնարդյունքները։ Ուսանողներին հատկապես հետաքրքրում են գրաբարի ուսուցման խորացմանը նպաստող հայագիտական ուղղություններին և համակարգչային լեզվաբանությանը, հատկապես ավտոմատ թարգմանությանը վերաբերող կամընտրական դասընթացները։ Կրթական ծրագրի ընթացքում դասախոսությունները և գործնական ժամերն ընթանում են համապատասխան տեսադիտողական նյութերի մատուցմամբ։ Համալսարանական հարթակում տեղադրվում են անհրաժեշտ բոլոր նյութերը, որոնց հասանելիություն ապահովված է։ Առաջարկվել են

լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության արդի հիմնախնդիրներին վերաբերող 5 մագիստրոսական թեզեր, որոնք ուսանողներն ընտրել և եռանդով աշխատում են անհրաժեշտ տեսական և գործնական աղբյուրների հետազոտության, ինչպես նաև թեզերի շարադրման ուղղությամբ: Թեզերի կատարման ընթացքը հսկվում է և՛ ավանդական ձևաչափով՝ ղեկավար- ուսանող ուղիղ կապով, և՛ ուժի մեջ նոր մտած էլեկտրոնային հարթակի պահանջներին համապատասխան, նյութերն ուղարկվում են և ստուգվում: Ծրագրի 5 ուսանողները աչքի են ընկնում բարձր պատրաստվածությամբ, իսկ նրանցից Էմմա Նոնինյանը ԵՊՀ հիմնադրման 105 ամյակի կապակցությամբ կազմակերպված միջոցառման ժամանակ ճանաչվել է ԵՊՀ 2024 թ. լավագույն ուսանող:

«**Հայ գրականություն»** մագիստրոսական ծրագրի ղեկավար, բ. գ. դ., պրոֆ. **Ա. Մակարյանը** նշեց, որ հավաքված է մագիստրոսների հրաշալի խումբ: 8 մագիստրոսներն էլ աչքի են ընկնում բարեխղճությամբ ու աշխատասիրությամբ, ընդունակությամբ և գիտական աշխատանք կատարելու ձիրքով:

Ի դեպ, նրանցից ոմանք ընդգրկված է ԵՊՀ-ի ներքին կամ ՀՀ ԲԿԳԿ-ի դրամաշնորհ-ներում՝ ստանալով ամենամյա կայուն աշխատավարձ: Ավելին՝ ամբիոնի ասպիրանտ Անի Օհանյանը և մագիստրոս Մերի Խաչատրյանը հաղթող են ճանաչվել «Երիտասարդ գիտ-նականների աջակցության ծրագրում» (ԵԳԱԾ)՝ ստանալով 4 միլիոն դրամաշնորհ: Նկատեմ, որ այդտեղից իր որոշակի մասնաբաժինն ունի ԵՊՀ-ն:

«Ժամանակակից հայոց լեզու և թարգմանչական գործ» մագիստրոսական ծրագրի ղեկավար, հայոց լեզվի ամբիոնի վարիչ, բ. գ. դ., պրոֆ. **Յու. Ավետիսյանը** նշեց, որ նախաձեռնել և իրականացրել ենք 1.5 տարի տևողությամբ մագիստրոսական ծրագիր, որը գործում է 2023-24 ուստարվանից: Նոր ծրագրում ներառվել են մի շարք նոր դասընթացներ, որոնք ներառելիս հաշվի ենք առել աշխատանքային շուկայի պահանջները, ինչպես նաև ուսանողների առաջարկները («Բանավեճի արվեստ», «Բիզնես հաղորդակցում», «Խմբագրական և հրատարակչական գործ»):

Ուսանողներին ուղղորդել ենք ընտրելու կամընտրական դասընթացներ՝ համակարգելով գործընթացը:

Կազմվել և էլեկտրոնային համակարգ է ներմուծվել դասընթացների ուղեցույցը:

Հաշվի առնելով կատարված լավ աշխատանքը՝ 2024-25 ուստարում բակալավրի և մագիստրոսական կրթական ծրագրերի ղեկավարներ Ա. Սարգսյանը, Յու. Ավետիսյանը, Ա. Աբաջյանը կշարունակեն ղեկավարել համապատասխան ծրագրերը: Քանի որ «Հայ գրականություն» մագիստրոսական ծրագիրը ընդհանուր է, 2024-25 ուստարում ծրագիրը կղեկավարի հայ նորագույն գրականության պատմության և գրաքննադատության ամբիոնի վարիչ, բ. գ. թ., դոց. Մեյրան Գրիգորյանը:

Օրակարգի 3-րդ հարցի առթիվ ֆակուլտետի դեկան դոց. Ա. Գալստյանը ձայնը տվեց նիստին ներկա հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի վարիչ բ. գ. դ., պրոֆ. Ալ. Մակարյանին, ով ներկայացրեց ամբիոնի տարեկան հաշվետվությունը: Պրոֆ. Ալ. Մակարյանը իր խոսքում մասնավորապես նշեց.

Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնն ունի 6, 25 հաստիք. աշխատում է 12 դասախոս՝ 3 պրոֆեսոր և 9 դոցենտ՝ չհաշված երիտասարդ 2 դասախոսների, որոնք գտնվում են ԱՄՆ-ում և այնտեղ հաջողությամբ ծավալելով գիտական գործունեություն՝ ոչ միայն տպագրում են լրջմիտ ուսումնասիրություններ, այլև հեղինակավոր պրոֆեսորների՝ Գևորգ Բարդակչյանի, Ռոլանդ Սյունիի, Գոդֆրիդ Հաագենի և այլոց հետ ստեղծում են գիտական հետաքրքիր կապեր ու նպաստում հայագիտության տարածմանն արտերկրում:

Ամբիոնի անդամների աշխատանքները **2023-2024** հաշվետու տարում բավականին տպավորիչ են: Նախ՝ **ուսումնական ոլորտը**:

Պրոֆեսորադասախոսական անձնակազմը, շարունակաբար ստանալով դեկանատի գործուն աջակցությունը, այն է՝ ծագած խնդիրներին անմիջապես արձագանքելու ունակությունը, աշխատում է բարեխղճորեն, պատշաճ մակարդակի են կարգապահությունն ու բարոյահոգեբանական մթնոլորտը: Չկան կարգապահական խախտումներ, հետևաբար՝ և նկատողություններ: Նրանց մի մասը հաջողությամբ ղեկավարում է ՈՒԳԸ աշխատանքներ, ակտիվորեն մասնակցում է ՀՀ ԲԿԳԿ-ի մասնագիտական խորհրդում, հաճախ է լինում հանրապետության դպրոցներում, հանդես գալիս դասախոսություններով և փորձում գրավիչ դարձնել հայ բանասիրությունը: Ակնառու է վերջին շրջանում մագիստրոսների, ասպիրանտների և հատկապես հայցորդների հետաքրքրության աճը ամբիոնի մասնագիտությունների գծով:

Ամբիոնը ձգտում է բակալավրիատի դեռևս ցածր կուրսերում նկատել և հոգածությամբ վերաբերվել առանձնակի շնորհալիներին, զարգացնել նրանց գիտական ունակություններն ու գրական ճաշակը: Ասվածի լավագույն ապացույցներն են այս տարվա ավարտական աշխատանքների փայլուն շատ պաշտպանությունները:

Խոսելով մագիստրոսական 1.5 տարվա նորաստեղծ ծրագրի մասին՝ նկատեմ, որ այն լիովին արդարացնում է իրեն: Հավաքված է մագիստրոսների հրաշալի խումբ: Ի դեպ, նրանցից ոմանք ընդգրկված է ԵՊՀ-ի ներքին կամ ՀՀ ԲԿԳԿ-ի դրամաշնորհներում՝ ստանալով ամենամսյա կայուն աշխատավարձ: Ավելին՝ ամբիոնի ասպիրանտ Անի Օհանյանը և մագիստրոս Մերի Խաչատրյանը հաղթող են ճանաչվել «Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրում»՝ ստանալով 4 միլիոն դրամաշնորհ: Նկատեմ, որ այդտեղից իր որոշակի մասնաբաժինն ունի նաև ֆակուլտետը:

Ինչ վերաբերում է **գիտական ոլորտին**, նկատեմ, որ ամբիոնի անդամները գիտական զեկուցումներով մասնակցել են միջազգային, հանրապետական ու համահամալսարանական գիտաժողովների: Մասնավորապես հիշատակելի են աշնանը կայացած գիտաժողովները՝ նվիրված Խաչատուր Աբովյանի անհետացման 175-ամյա տարելիցին, գրականագետ, ակադեմիկոս Էդվարդ Ջրբաշյանի ծննդյան 100-ամյակին և «Աբեղյանական ընթերցումներին»:

Պրոֆեսորադասախոսական անձնակազմը հրատարակել է մենագրություններ, բուհական և դպրոցական դասագրքեր, ուսումնասիրությունների ժողովածուներ, բազմաթիվ հոդվածներ՝ ՀՀ ԲԿԳԿ-ի և միջազգային հեղինակավոր՝ SHOPUS պարբերականներում: Ի դեպ, վերջիններիս թիվն արդեն 5-ն է, իսկ ևս 4-ը ստորագրված և հաստատված են

աշնանային գալիք համարներում: Նշեմ նաև, որ Աշխեն Ջրբաշյանի՝ «Գրականության տեսություն և գեղագիտություն» խորագրով բուհական դասագիրքն արդեն հասանելի է ԵՊՀ հրատարակչության կայքում, իսկ թղթային տարբերակը կտպագրվի առաջիկա շաբաթներին:

Հաշվետվության վերաբերյալ ելույթ ունեցան, բ. գ. դ., պրոֆ. Ա. Աբաջյանը, բ. գ. թ., դոց. դոց. Ա. Տեր-Մինասյանը, Ա. Ջրբաշյանը և այլք: Նշվեց, որ հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնը կատարել է մեծ և արդյունավետ աշխատանք գիտակրթական գործունեության կազմակերպման առումով: Խորհուրդը ամբիոնի կատարած աշխատանքը գնահատեց բարձր:

Օրակարգի 4-րդ հարցի՝ առկա ասպիրանտների ատեստացիայի առիթով առանձին-առանձին ներս հրավիրվեցին համապատասխան ամբիոնների առկա ուսուցման ասպիրանտները: Վերջիններս ներկայացրին հաշվետու ժամանակահատվածում իրենց կատարած աշխատանքները: Գիտխորհրդի անդամները մասնավորապես.

1. **ԼՍԵՑԻՆ –** Հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի առկա ասպիրանտ **Վարդուհի Արտաշեսի Բարսեղյանի** տարեկան ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. - Պրոֆ. Ա. Աբաջյանը, դոց., դոց. Ա. Գալստյանը, Ն. Դիլբարյանը, Վ. Պետրոսյանը և այլք: Նշվեց, որ Վարդուհի Բարսեղյանը ընթացիկ ուսումնական տարվա ընթացքում մասնակցել է ասպիրանտուրական 8 դասընթացների՝ հավաքելով անհրաժեշտ կրեդիտները, մասնակցել է հանրապետական 3 գիտաժողովների՝ հանդես գալով հետաքրքիր զեկուցումներով: Ասպիրանտը ուսումնական տարվա ընթացքում կազմել է թեկնածուական ատենախոսության հետազոտական ծրագիրը, կառուցվածքը, ուսումնասիրել գրականության ցանկը և անհրաժեշտ նյութերը, սկսել է աշխատանքի հիմք հանդիսացող բառարանի («Առձեռն բառարան հայկազեան լեզվի») քարտագրումը, ինչպես նաև կատարել է որոշ եզրահանգումների նախնական արձանագրումը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի առկա ասպիրանտ Վարդուհի Արտաշեսի Բարսեղյանին ատեստավորել:

2. **ԼՍԵՑԻՆ –** Հայոց լեզվի ամբիոնի առկա ասպիրանտ **Գայանե Դալլաքյանի** տարեկան ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. - Պրոֆ. Յու. Ավետիսյանը, դոց., դոց. Ա. Գալստյանը, Ա. Տեր-Մինասյանը, Թ. Տոնոյանը, Մ. Ֆալաքյանը և այլք:

Նշվեց, որ Գայանե Դալլաքյանը ընթացիկ ուսումնական տարվա ընթացքում մասնակցել է ասպիրանտուրական դասընթացների՝ հավաքելով անհրաժեշտ կրեդիտները, Ասպիրանտը ուսումնական տարվա ընթացքում կազմել է թեկնածուական ատենախոսության հետազոտական ծրագիրը, կառուցվածքը, ուսումնասիրել գրականության ցանկը և անհրաժեշտ նյութերը, սկսել է քարտագրումը, ինչպես նաև կատարել է որոշ եզրահանգումների նախնական արձանագրումը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հայոց լեզվի ամբիոնի առկա ասպիրանտ Գայանե Դալլաքյանին ատեստավորել:

3. **ԼՍԵՑԻՆ** – Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի առկա ասպիրանտ **Հովհաննես Հովակիմի Հովակիմյանի** տարեկան ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. - Պրոֆ. պրոֆ. Ալ. Մակարյանը, Ս. Մուրադյանը, դոց. դոց. Ա. Գալստյանը, Վ. Եղիազարյանը, Ա. Ջրբաշյանը և այլք:

Նշվեց, որ Հովհաննես Հովակիմյանը ընթացիկ ուսումնական տարվա ընթացքում մասնակցել է ասպիրանտուրական դասընթացների՝ հավաքելով անհրաժեշտ կրեդիտները, Ասպիրանտը ուսումնական տարվա ընթացքում կազմել է թեկնածուական ատենախոսության հետազոտական ծրագիրը, կառուցվածքը, ուսումնասիրել գրականության ցանկը և անհրաժեշտ նյութերը: Շարադրել և գրեթե ավարտին է հասցրել աշխատանքի 3 գլուխները:

Ունի տպագրված միջազգային 1 հոդված, ևս երկու գիտական հոդված առաջիկայում կհանձնվեն տպագրության:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի առկա ասպիրանտ Հովհաննես Հովակիմի Հովակիմյանին ատեստավորել:

4. **ԼՍԵՑԻՆ** – Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի առկա ասպիրանտ **Աշոտ Մկրտչի Մկրյանի** տարեկան ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. - Պրոֆ. պրոֆ. Ալ. Մակարյանը, Ժ. Քալանթարյանը, դոց. դոց. Ա. Գալստյանը, Վ. Եղիազարյանը, Ա. Ջրբաշյանը և այլք:

Նշվեց, որ Աշոտ Մկրյանը ընթացիկ ուսումնական տարվա ընթացքում մասնակցել է ասպիրանտուրական դասընթացների՝ հավաքելով անհրաժեշտ կրեդիտները, Ասպիրանտը ուսումնական տարվա ընթացքում կազմել է թեկնածուական ատենախոսության հետազոտական ծրագիրը, կառուցվածքը, ուսումնասիրել գրականության ցանկը և անհրաժեշտ նյութերը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի առկա ասպիրանտ Աշոտ Մկրյանին ատեստավորել:

Ընթացիկ հարցերում՝

1. **ԼՍԵՑԻՆ** – Հայ-ռուսական համալսարանի դասախոս, բ. գ. թ., դոցենտ Անի Ասատուրի Փաշայանի դոկտորական ատենախոսության թեմայի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Պրոֆ. Պրոֆ. Ալ. Մակարյանը, Ժ. Քալանթարյանը, դոց., դոց. Ա. Գալստյանը, Ա. Ջրբաշյանը, Վ. Եղիազարյանը:

Նշվեց, որ Անի Փաշայանը դիմել է ԵՊՀ դոկտորական ատենախոսության թեմա հաստատելու խնդրանքով: Նա 2008 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Աղասի Այվազյանի արձակի արվեստը» թեմայով: Հետագայում նույնպես զբաղվել է Ա.

Այվազյանի երկերի ուսումնասիրությամբ: Ա. Փաշայանը մտադիր է նոր ուսումնասիրության մեջ ներառել Ա. Այվազյանի ամբողջ ստեղծագործությունը՝ ընդգրկելով նաև թատերգությունը: Ա. Փաշայանի դոկտորական ատենախոսության թեմա առաջարկվեց «Աղասի Այվազյանի պոետիկան»:

ՈՐՈՇԵՑԻՆ – Բ. գ. թ., դոցենտ Անի Փաշայանի դոկտորական ատենախոսության թեմա հաստատել՝ «Աղասի Այվազյանի պոետիկան»՝ Ժ 01. 02 - «Նորագույն շրջանի հայ գրականություն» մասնագիտությամբ:

2. ԼՍԵՑԻՆ – Բ. գ. թ., դոցենտ Ալվարդ Սեմիրջյանի՝ «20-րդ դարի գրական-գեղարվեստական ուղղությունները (դասախոսություններ. մաս Բ)» ուսումնական ձեռնարկը հրատարակության երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Պրոֆ. Ա. Մակարյանը, դոց. դոց. Ա. Գալստյանը, Ա. Ջրբաշյանը և Վ. Նավասարդյանը:

Նշվեց, որ Ալվարդ Սեմիրջյանի՝ «20-րդ դարի գրական-գեղարվեստական ուղղությունները (դասախոսություններ. մաս Բ)» ուսումնական ձեռնարկը կարևոր ներդրում կլինի հայ բանասիրության ֆակուլտետի ուսումնական գործընթացում: Ներկայացված դասախոսությունները արդեն տպագրված առաջին ձեռնարկի շարունակությունն են և ամբողջացնում են հեղինակի ուսումնասիրությունները թեմայի վերաբերյալ:

Ուսումնական ձեռնարկի վերաբերյալ առկա են դոց. դոց. Վ. Նավասարդյանի և Ն. Վարդանյանի երաշխավորող կարծիքները:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ալվարդ Սեմիրջյանի՝ «20-րդ դարի գրական-գեղարվեստական ուղղությունները (դասախոսություններ. մաս Բ)» ուսումնական ձեռնարկը երաշխավորել տպագրության:

ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԳԱԼՍՏՅԱՆ

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ. ՄԵԼՔՈՆՅԱՆ